2126.9/1271

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
«23» 02 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0038-21

Ձեռնարկողը՝ **«ՄԱԼԱԽԻՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ**
ք. Երևան, Օրբելի եղբայրներ փող., շենք 8, բն.35

Գործունեությունը՝ Սալիի տրավերտինների հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Վայոց Ձորի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Գ. Գևորգյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0038-21
<23> 02 2021թ.

Վայոց Ձորի մարզի Սալիի տրավերտինների հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«ՄԱԼԱԽԻՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/ /Ա կատեգորիա/
Տեղադրման վայրը՝	Վայոց Ձորի մարզ, Եղեգիս համայնք

Ներածական մաս. «ՄԱԼԱԽԻՏ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության կողմից /այսուհետ՝ Ընկերություն/ նախատեսվում է Սալիի տրավերտինների արդյունահանման աշխատանքներ, որի նախագիծը մշակվել է Ընկերության տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 2)-րդ կետի գ. ենթակետի՝ Սալիի տրավերտինների հանքավայրի արդյունահանումը դասակարգվում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Նկարագրական մաս. Սալիի տրավերտինների հանքավայրը վարչական տեսակետից գտնվում է Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնքի Շատին բնակավայրի վարչական տարածքում և տեղակայված է Սալի գյուղից 2.3կմ դեպի հարավ-արևելք, Շատին գյուղից 2,5կմ դեպի հյուսիս-արևմուտք հեռավորության վրա: Հանքավայրի մոտակայքով անցնում է Եղեգնաձոր-Մարտունի բարեկարգ ասֆալտապատ ճանապարհը: Հանքավայրի տարածքը գտնվում է 1405-1525մ.ծ.մ. բարձրությունների վրա և զբաղեցնում է 4,08հա մակերես՝ 420մ (հյուսիս-արևելքից՝ հարավ-արևմուտք) երկարությամբ և 97մ (հյուսիս-արևմուտքից՝ հարավ-արևելք) լայնությամբ:

Վայոց Ձորի մարզի Սալիի տրավերտինների հանքավայրի պաշարները հաստատվել են ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ՕՀՊԳ-ի կողմից՝ 22 փետրվարի 2005թ. N 55 որոշմամբ 01.10.2004թ. դրությամբ, B կարգի 192,3հազ.մ^3 քանակով, բլոկների 45% միջին ելքով: Օգտակար հանածոյի կորզվող պաշարները հաշվարկված են 180 հազ.մ^3: Մակաբացման ապարները ներկայացված են միայն 0.62մ հզորություն ունեցող հողմահարված տրավերտիններով՝ 25.33հազ.մ^3 ծավալով:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՓՐԱԿՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՍՊԿ * ՀՀ ԵՐԵՎԱՆ * ՀՀ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ "ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER" SNCO * RA YEREVAN * RA GORCARARUTYAN HAYASTANI PETAKAN SPASARKU HAMAYNQAYIN OCHARAR KAZMAKERPUTYUN
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Հանքավայրի օգտակար հանածոն՝ տրավերտինները, իրենց քիմիական կազմով և ֆիզիկա-մեխանիկական հատկություններով բավարարում են "Блоки из горных пород для производства облицовочных, архитектурно-строительных, мемориальных и других изделий" 9479-98 ГОСТ –ի տեխնիկական պահանջներին:

Համաձայն "Классификация запасов месторождениях и прогнозных ресурсов твердых полезных ископаемых" հրահանգի ցուցումների տրավերտինների հանքավայրը, ըստ երկրաբանական կառուցվածքի բարդության և երկրաբանական հայտանիշների փոփոխականության աստիճանի, վերագրվում է 1-ին խմբին:

Նախագծվող տեղամասի կոորդինատներն են ARM WGS -84 համակարգով.

1. 4413457 8524978	5. 4413781 8525271
2. 4413519 8525097	6. 4413757 8525160
3. 4413614 8525205	7. 4413685 8525071
4. 4413694 8525262	8. 4413585 8525034

Ելնելով հանքավայրի տեղադիրքից, հանքամարմնի տեղադրման պարամետրերից և մակաբացման ապարների ոչ մեծ ծավալներից, հանքավայրի մշակումը նախատեսվում է բաց լեռնային աշխատանքներով:

Նախագծով ներկայացված են տարեկան մարվող և տարեկան արդյունահանվող պաշարի արտադրողականությունը, համապատասխանաբար՝ 3760 և 3520մ^3:

Բացահանքի ծառայման ժամկետն ընդունված է 50 տարի: Մակաբացման աշխատանքները նախատեսված են կատարել Т-170 բուլդոզերի օգնությամբ, որի արտադրողականությունը 800 մ^3/հերթ է:

Հանքավայրի արդյունահանումը կազմակերպվելու է հանքավայրի երկու հորիզոններից միաժամանակ՝ հանքավայրի հյուսիսային մասից, նրա 1545.0մ և կենտրոնական մասի 1505.0մ բարձրության հորիզոններից: 1545.0մ մինչև 1525.0մ բարձրության հորիզոնի արդյունահնման ժամանակ այս հանքաստիճանի մակաբացման ապարները կտեղափոխվեն բացահանքի հյուսիս-արևմտյան կողմը և կտեղավորվեն արտաքին ժամանակավոր լցակույտի ձևով: Արտաքին լցակույտ են տեղափոխվում նաև արտադրական թափոններն ու նախկին արդյունահանումից մնացած կուտակված թափոնները՝ 1100մ^3 ծավալով:

Հանքավայրի մշակման համար ընտրված է ընդլայնական մեկ կողանի մշակման համակարգ, որի տարրերն են՝

- հանքաստիճանի բարձրություն՝ 5մ (2.5մ բարձրությամբ ենթաստիճաններով),
- աշխատանքային հանքաստիճանի թեքման անկյուն՝ 90°,
- անվտանգության բերմայի լայնություն /ենթաստիճան/՝ 1.5մ,
- աշխատանքային հրապարակի ամենափոքր լայնություն՝ 18-20մ:

Բացահանքի արևելյան մասում գոյություն ունեցող գրունտային ավտոճանապարհից նախատեսվում է նոր ավտոճանապարհի անցում դեպի 1545.0մ բարձրության հորիզոն՝ 395մ երկարությամբ, 6մ լայնությամբ, որի ամենամեծ թեքությունը՝ 105.26%:

Ընկերության կողմից շահագործվող բացահանքը վերջնական դիրքում բնութագրվում է հետևյալ պարամետրերով.

- ամենամեծ երկարություն՝ 420մ,
- ամենամեծ լայնություն՝ 140մ,
- մակաբացման ապարների միջին հզորություն՝ 0.62մ,
- օգտակար հանածոյի ամենամեծ հզորություն՝ 8.0մ,

ՀՀ ԵՐԵՎԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՕՑԵՆԿԻ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

- հանքաստիճանի բարձրություն՝ 5մ,
- օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարների քանակ՝ 188.0հազ.մ^3,
- արդյունահանվող պաշարների քանակ՝ 176.0հազ.մ^3,
- մակաբացման ապարների քանակ՝ 25.3հազ.մ^3,
- օտարման մակերես՝ 4.08հա:

Համաձայն նախագծի, բացահանքի շահագործման ընթացքում, նախատեսվում է օգտակար հանածոյի անխուսափելի կորուստներ (նախագծային կորուստներ), որոնք բաժանվում են երկու խմբերի.

1. Կորուստներ, որոնք պայմանավորված են հանքավայրի լեռնատեխնիկական և շրջակա միջավայրի պայմաններով: Դրանք այն կորուստներն են, որոնք բնամասերի տեսքով մնում են ընդերքում, թողնվում են բացահանքի կողերում հանքաստիճանների եզրերի թույլատրելի թեքությունն ապահովելու համար (6700 մ^3 կամ 3.56%):
2. Կորուստներ, որոնք մնում են բացահանքի հատակում: Այդ կորուստները կազմում են 5 300մ^3 (2.82%):

Ընդամենը կորուստները կկազմեն 12 000մ^3 (6.38%):

Ներկայացված նախագծով, միաքարի առանձնացումը զանգվածից նախատեսվում է կատարել նախ՝ հորիզոնական հատում հանքաստիճանի հատակից «Виктория» մակնիշի կտրիչաշղթայավոր քարհատ մեքենայի միջոցով (հատման խորությունը ընդունվում է 2.5մ է), ապա՝ մենաքարի ընդերկայնական և ընդլայնական ուղղություններով ուղղաձիգ հատումներ, որոնք կատարվելու են «Надежда-2» մակնիշի ալմաստաճոպանային քարհատ մեքենայի միջոցով (ընդերկայնական ուղղությամբ հատվող շերտի երկարությունը ընդունված է 6.0, իսկ ընդլայնական ուղղությունը՝ 1.5մ):

Միաքարի հեռացնելը (քարշ տալը) հանքախորշերից մինչև 10.0-15.0մ հեռավորության վրա նախատեսվում է կատարել Т-330 մակնիշի բուլդոզերի միջոցով: Միաքարի մասնատումը 2.5x2.0x1.5մ չափերի բլոկների նույնպես կատարվում է «Надежда-2» մակնիշի ալմաստաճոպանային քարհատ մեքենայի միջոցով:

Համաձայն նախագծի, ապրանքային բլոկների բարձումը ավտոինքնաթափի մեջ կկատարվի 25տ բեռնատարողությամբ КС–3577 մակնիշի կռունկի միջոցով: Բլոկների արդյունահանման ժամանակ առաջացած արտադրական թափոնները բուլդոզերով կտեղափոխվեն լցակույտ՝ հետագայում խախտված տարածքների վերականգնման համար օգտագործելու նպատակով: Նախագծով ընդունված բուլդոզերը կարելի է օգտագործել լցակույտառաջացման ժամանակ:

Ելնելով նախագծում ընդունված մշակման եղանակից, ինչպես նաև լեռնաերկրաբանական պայմաններից՝ ընտրված է արտաքին, իսկ հետո նաև ներքին բուլդոզերային լցակույտաառաջացում: Ըստ ներկայացված տվյալների մակաբացման ապարների հաշվարկային ընդհանուր ծավալը կազմում է 25300մ^3, իսկ արտադրական թափոնների ընդհանուր քանակը՝ 96800մ^3, ինչպես նաև բացահանքի մակերեսին կուտակված տեխնածին թափոնները՝ 1100մ^3, որոնք շահագործման տարիներին տեղափոխվում են արտաքին ժամանակավոր լցակույտ, այնուհետև, շահագործմանը զուգընթաց՝ ներքին լցակույտաառաջացում: Արտաքին լցակույտերի միջին բարձրությունն է 5.5մ, որի թեքության a=35^0-ի դեպքում զբաղեցրած մակերեսները միասին կազմում են 1.27հա մակերես:

1545.0մ-1525մ բարձրության հորիզոնի աշխատանքները սկսելիս ծածկող ապարների շերտը՝ հողմնահարված, ջարդոտված տրավերտինները, և հանքարդյունահանման ժամանակ առաջացած արտադրական թափոնները բուլդոզերով հավաքվում է և տեղափոխվում բացահանքի հյուսիսարևմտյան մասը՝ ժամանակավոր

02543163
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

լցակույտ և պահեստավորվում (արտաքին լցակույտ): Հանքավայրի 1505մ բարձրության և նրանից ներքևի հանքաստիճանների մակաբացման ապարները, ինչպես նաև տեխնածին առաջացումները և արտադրական թափոնները տեղափոխվում են հանքավայրի արևելյան և հարավ-արևելյան մասը՝ ստեղծելով արտաքին ժամանակավոր լցակույտ:

Հանքաստիճանների, մինչև հատակը արդյունահանելուց հետո, կատարվում է մշակված հանքաստիճանների վրա ներքին լցակույտաառաջացում:

Բացահանքի լեռնատեխնիկական վերականգնումները իրականացվելու է բացահանքի շահագործման 14-րդ տարվանից սկսած: Ժամանակավոր լցակույտերից մակաբացման ապարները և արտադրական թափոնները աստիճանաբար կտեղափոխվեն և կտեղավորվեն արդեն արդյունահանված հորիզոնների վրա՝ 3.0մ հզորությամբ և կհարթեցվեն: Կստեղծվի ներքին լցակույտեր, և այսպես շարունակ: Մինչև շահագործման ավարտը կկատարվի 118900մ^3 ծավալի մակաբացման ապարների և արտադրական թափոնների տեղափոխում և հարթեցում բացահանքի բացված հորիզոնների վրա և կձևավորվի ներքին լցակույտ՝ 3մ բարձրությամբ: Մակաբացման ապարների և արտադրական թափոնների մնացած մասը, որի ծավալն է՝ 3200մ^3 կտեղափոխվի 1510մ բարձրության հորիզոնի վրա, կլցվի 3.0մ բարձրությամբ և կհարթեցվի: Հարթեցումը կատարվելու է բուլդոզերի օգնությամբ: Լեռնային աշխատանքների ավարտից հետո կհարթեցվեն բացահանքի ողջ մակերեսը՝ 40100մ^2, արտադրական հրապարակը՝ 250մ^2, ավտոճանապարհները՝ 1550մ^2, ինչպես նաև լցակույտի նախկինում զբաղեցրած մակերեսը՝ 12700մ^2: Ընդհանուր մակերեսը կլինի՝ 54600մ^2:

Բացահանքի ջրամատակարարումը նախատեսված է աշխատողներին խմելու ջրով ապահովելու, ինչպես նաև հորատման աշխատանքները, աշխատանքային հրապարակները, լցակույտերը և ավտոճանապարհները փոշենստեցման նպատակով ջրելու համար: Բացահանքում տեխնիկական և խմելու նպատակներով ջուրը կբերվի ջրատար մեքենաներով՝ պայմանագրային հիմունքներով: Կենցաղային կեղտաջրերը կհեռացվեն անջրթափանց հոր, որը սահմանված կարգով կդատարկվի:

Հանքավայրի շահագործման ընթացքում մթնոլորտ արտանետվող վնասակար գազերի և փոշու աղբյուր են հանդիսանում բացահանքը, տեխնիկական և տրանսպորտային միջոցները, լցակույտերը: Օդային ավազան արտանետվող վնասակար նյութերն են՝ անօրգանական փոշին, ազոտի երկօքսիդ և ածխածնի օքսիդները, պինդ մասնիկները (մուր): ՇՄԱԳ հաշվետվությունում հաշվարկվել են արտանետումների քանակները: Արտանետումների ազդեցությունը գնահատելու համար կատարվել է դրանց ցրման արդյունքում սպասվող գետնամերձ կոնցենտրացիաների հաշվարկ: Համաձայն հաշվարկների արդյունքների արտանետվող նյութերի գետնամերձ կոնցենտրացիաների առավելագույն արժեքները /հաշվի առնելով նաև ֆոնային ցուցանիշները/, չեն գերազանցում սահմանված ՍԹԿ-ը:

Բացահանքի լեռնակապիտալ աշխատանքների և շահագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները կանխարգելելու և մեղմելու նպատակով մշակվել են բնապահպանական միջոցառումների ծրագիր ուղղված՝ մթնոլորտային օդի, հողային, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության պահպանությանը, այդ թվում՝

- փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախների (աշխատանքային հրապարակներ, հանքախորշեր, լցակույտեր, մուտքային և դեպի լցակույտեր տանող ավտոճանապարհ) ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին:

02543163
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

- դիզելային շարժիչներով աշխատող լեռնատրանսպորտային սարքավորումների վրա կլանիչների տեղադրում՝ արտանետումների նվազեցման նպատակով,
- տեխնիկա-տրանսպորտային միջոցների շահագործումը սարքին վիճակում՝ վառելիքի և յուղի պատահական արտահոսքը բացառելու նպատակով,
- հատուկ առանձնացված տեղերում մետաղյա տարաներում օգտագործված յուղերի հավաքումն ու պահպանումը՝ հետագա ուտիլիզացման նպատակով,
- արտադրական հարթակում և աշխատակիցների հանգստյան վայրերում աղբամանների տեղադրում՝ հողի աղբոտումը կանխելու նպատակով,
- արտադրական հրապարակում նավթամթերքների պահեստավորում և պահում հատուկ հատկացված տեղում,
- օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարաների մեջ՝ երկրորդական վերամշակման համար,
- հնամաշ դետալների ու մասերի հավաքում և հանձնում՝ որպես մետաղական թափոն,
- կեղտաջրերի հավաքում հորատիպ զուգարանում, որը հետագայում դատարկում են հատուկ ծառայության ուժերով,
- խախտված տարածքների վերականգնում/ռեկուլտիվացիա:

Տեխնիկական ռեկուլտիվացումից հետո նախատեսված է կենսաբանական ռեկուլտիվացիա, որի համար կկիրառվի հիդրոցանքի եղանակը:

Կենսաբանական ռեկուլտիվացումը նախատեսված է վերականգնված ողջ տարածքների համար, որոնց ընդհանուր մակերեսը կկազմի 5.46հա և ռեկուլտիվացման ընդհանուր ծախսերը կկազմեն՝ 1715.9հազ. դրամ:

Ընկերության կողմից բացահանքի շահագործումը կթուլացնի սոցիալական լարվածությունը, քանի որ աշխատողների հիմնական մասը ընդգրկվելու է մոտակա համայնքներից:

Արդյունահանմանը զուգընթաց իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների կանխարգելմանն ու մեղմմանն ուղղված մշտադիտարկումներ, որոնք ներառվել են բնապահպանական մշտադիտարկումների պլանում և որպես օբյեկտներ դիտարկվել են՝ մթնոլորտային օդը, հողային ծածկույթը, կենսաբանական միջավայրը: Մշտադիտարկումների իրականացման տարեկան ծախսերը կկազմեն 150.0 հազ ՀՀ դրամ:

ՇՄԱԳ-ում նախատեսվել են նաև միջոցառումներ, ուղղված աշխատանքային միջավայրում աշխատողների անվտանգությանը, արտակարգ իրավիճակների արձագանքմանը, հրդեհային անվտանգությանը, հնարավոր սոցիալական ազդեցությունների մեղմմանն ու կանխարգելմանը: Բոլոր միջոցառումներն իրենց գործողություններով ամփոփվել են բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում:

Եզրափակիչ մաս. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջներով: Գնահատման և փորձաքննության փուլերում գործունեության իրականացման վերաբերյալ Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնքում անցկացվել են հանրային քննարկումներ /չորս քննարկում/, որոնց ընթացքում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության՝ կարևորվելով լրացուցիչ աշխատատեղերի ստեղծումը և համայնքում սոցիալական ծրագրերի իրականացումը:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են առողջապահության, արտակարգ իրավիճակների և պաշպանության նախարարությունները, Վայոց Ձորի

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՍՏՈՒԳԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՍՏՈՒԳԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

մարզպետարանը, տեղական ինքնակառավարման մարմինները, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, որոնց կողմից ներկայացված կարծիքները ևս հաշվի են առնվել փորձաքննության գործընթացում:

Փորձաքննական պահանջներ

1. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 22 փետրվարի 2018թվականի N 191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտային օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:
2. Հանքավայրի շահագործման ընթացքում աշխատողների անվտանգության և առողջության ապահովման համար անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 23-րդ գլխի պահանջներով:
3. Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումն ու ժամանակացույցերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՄԱԼԱԽԻՏ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Վայոց Ձորի մարզի Սալիի տրավերտինների հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ՝ Մ.Ավետիսյան